ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2023 թվականի N 819 - Ա

«ԴԱՐԴԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, 23-րդ հոդվածի 5-րդ մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 9-ի N 168 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վարկերի տրամադրման կարգի 23-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին թիվ ՄՆԴ/1755/04/19 սնանկության գործով հարուցված թիվ 09566604 կատարողական վարույթի ընթացքում կնքվող հաշտության համաձայնության (այսուհետ՝ հաշտության համաձայնություն) շրջանակներում «Դարդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) վարկային պարտավորության պայմաններում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և ընկերության միջև 2010 թվականի ապրիլի 7-ին կնքված N 01 պահանջի իրավունքի զիջման մասին պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) հիման վրա ընկերության

վարկի հիմնական գումարի չվճարված մասը (առանց հաշվարկված տոկոսագումարի և տույժի) կազմող 1,010,837.10 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարը, վարկի մնացորդի նկատմամբ պայմանագրով սահմանված տոկոսագումարը և հաշվարկված տույժերը ընկերությունը պարտավորվում է վճարել սույն որոշման N 1 հավելվածով սահմանված ժամանակացույցին (այսուհետ՝ ժամանակացույց) համապատասխան: Ընդ որում՝ ընկերության նկատմամբ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը հաշվարկված տոկոսագումարները և տույժի գումարները ենթակա են կապիտալացման՝ որպես վարկի հիմնական գումար.

2) ի ապահովումն հաշտության համաձայնությունից ծագող պարտավորությունների՝ ընկերությունը պարտավորվում է, որպես լրացուցիչ ապահովման միջոց, յուրաքանչյուր տարվա համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել ժամանակացույցով տվյալ տարվա համար վճարման ենթակա մարումների հանրագումարի չափով, առնվազն տասներեք ամիս գործողության ժամկետով անհետկանչելի բանկային երաշխիք մինչև տվյալ տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 15-ը: Ընդ որում՝ 2023 թվականի համար բանկային երաշխիքն ընկերությունը պարտավորվում է ներկայացնել հաշտության համաձայնությունը կնքելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ